Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ------ 2023թ. **N -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 849-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 24.2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի «Մշակութային գործունեության իրականացման նպատակով Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ եվ այլն) օգտագործման պայմանները, պահանջները եվ սահմանափակումները սահմանելու մասին» N 849-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը.

1) 11-րդ կետի «100 մ հեռավորության վրա:» բառերից հետո լրացնել «Սահմանափակումը չի վերաբերում նկարչություն և արհեստագործություն իրականացնողներին:» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ**
ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 849-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

2023 թվականի մարտի 22-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-113-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 2023 թվականի ապրիլի 14-ին, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է նոր 24.2-րդ կետով՝ համայնքի ավագանուն վերապահելով իրավասություն սահմանելու մշակութային գործունեության իրականացման նպատակով Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները և սահմանափակումները:

Գործող կարգավորումների համաձայն՝ բնակելի, հասարակական նշանակության շենքերին, շինություններին հարակից բացօթյա հանրային վայրերում մշակութային գործունեություն կարող է իրականացվել բնակելի, հասարակական նշանակության շենքերից, շինություններից առնվազն 10 մ հեռավորության վրա՝ ժամը 10:00-ից 21:00-ն ընկած ժամանակահատվածում և մինչև 23.00-ն՝ բնակելի, հասարակական նշանակության շենքերից, շինություններից առնվազն 100 մ հեռավորության վրա:

Քանի որ կան մշակութային ոլորտներ, ինչպիսիք են նկարչությունը, արհեստագործությունը, որոնք իրենցից չեն ենթադրում աղմուկ և չեն կարող խանգարել բնակիչների անդորրը, սույն նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի **N**849-Ն որոշման մեջ կատարել լրացում և սահմանափակումները կիրառել բացառությամբ նկարչություն և արհեստագործություն իրականացնողների համար:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել մշակել և Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնել սույն նախագիծը:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ**

ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ